կերը շատ մեծնալու ատեն նուազ չերեւնայ ։

Հետեւեալ աղիւսակիս մէջ կը գտնենք առարկային ոսպնաձեւէն ու ոսպնաձեւին լաթէն ունեցած զանազան հեռաւորութիւններուն չափը, և անոնց համեմատ պատկերին մեծնալը ։

Առարկային ոսպնաձեւէն ունեցած հեռաւորութիւնը ։	Ոսպնաձեւին կտաւէն ունեցած հեռաւորութիւնը ։	Պատկերին մեծութիւնը ։
48 բթաչափ ․	16 բթաչափ ․	1/3 բթաչափ ․
36 ”	18 ”	1/2 ”
24 ”	24 ”	1 ”
18 ”	36 ”	2 ”
16 ”	48 ”	3 ”
14 ”	84 ”	6 ”
13 ”	156 ”	12 ”
12 1/2 ”	648 ”	24 ”
12 ”	և այլն	և այլն

Այս աղիւսակը գրուած է մէկ ոսպնաձեւի համար, բայց կրնայ նաև երկու ոսպնաձեւ գործածուիլ, որով արգասիքն ալ աւելի մեծ կ'ըլլայ ։ Երկու ոսպնաձեւները գրուած պիտի ըլլան մի և նոյն առանցքի վրայ ։

Հոս գտնենք ուրիշ աղիւսակ մ'ալ երկու ոսպնաձեւի համար, որուն մէջ առարկային առաջին ոսպնաձեւէն ունեցած հեռաւորութիւնը միշտ անփոփոխ է, և է 4 բթաչափ ․ և երկրորդ ոսպնաձեւը մօտենալով կամ հեռանալով առջինէն կը մեծցընէ կամ կը պզտիկցընէ առարկային պատկերը ։

Առարկային երկրորդ ոսպնաձեւէն ունեցած հեռաւորուէնը ։	Երկրորդ ոսպնաձեւին կտաւէն ունեցած հեռաւորութենը ։	Պատկերին մեծութիւնը ․
40 բթաչափ ․	16 բթաչափ ․	2/3 բթաչափ ․
28 ”	18 ”	1 ”
16 ”	24 ”	2 ”
10 ”	36 ”	4 ”
8 ”	48 ”	6 ”
6 ”	84 ”	12 ”
5 ”	156 ”	24 ”
4 1/2 ”	648 ”	48 ”

Այս աղիւսակէս յայտնի կը տեսնուի որ առարկային պատկերը երկու ոսպնաձեւով կրկնապատիկ աւելի կը մեծնայ քան թէ մէկ ոսպնաձեւով ․ այս ալ պէտք է գիտնալ, որ գործին թէ մէկ ոսպնաձեւով ըլլայ և թէ երկու ոսպնաձեւով, առարկային պատկերը միշտ շրջուն կ'երեւցընէ, ուստի որպէս զի ուղիղ երեւցընէ, պէտք է առարկան շրջուն դիրքով դնել գործւոյն մէջ ։

Հ ․ Մ ․ ՍՈՓ ․

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Երգ հայրենի ։

ՄԻՆՉԴԵՌ յուսով խայտայ բնութն
Յետ դառնաշունչ ձըմերանւոյն,
Եւ 'ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն,
Մինչ բոյր 'ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճռուողեն նորեկ ծիծռունք,
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան ։

Ուր հելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զուարթ մարգագետինք
Ուր քան ըզքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկինք ։
Հեռի 'ի քէն պանդուխտ գոլով
Ըղձովըդ յար տապիմ անձկով ․
Ի խանձարուրդ իմոց կենաց
Ո՛վ Հայաստան առնեմ ես դարձ ։

Գայցեն աւուրք ուր մանկութեան
Ընկցի տիոցս իմ գեղ դալար,
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթեւ 'ի գարշապար ․
Ուր հէք մուսայս մասն 'ի յերեր
Մոռանայցէ երգել ըզսէր,
Ըզնինջ 'ի ծոցդ առնուլ յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան ․

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻՔԹԱՇԼԵԱՆ
ՅԱՇԱԿԵՐՏԱՑ ՄՈՒՐԱՏ ․ ՎԱՐԺ ․

(Նմանողութեամբ Quant tout renait ։)